ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1490 21.11.2014թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան.

Սույն թվականի նոյեմբերի 19-ին Դիտորդական խումբը այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Արմավիրի ՄՎ Արմավիրի ՁՊՎ և ուսումնասիրությունների ընթացքում արձանագրել էր մի շարք թերություններ և խախտումներ:

1. Ձերբակալված Դ. Հարությունյանը ՀՀ ոստիկանության Արմավիրի ՄՎ Արմավիրի բաժին բերման է ենթարկվել 17.11.2014թ-ին ժամը 08.50-ին բայց ձերբակալվել էր նույն օրը՝ ժամը 18.55-ին, մոտ 10 ժամ անց և ՁՊՎ էր ընդունվել ժամը 19.20-ին:
2. Դ. Հարությունյանը ՀՀ ոստիկանության Արամավիրի բաժին բերման էր ենթարկվել 17.11.2014թ-ին ժամը 08.50-ին, բայց նրան բերման ենթարկելու վերաբերյալ արձանագրություն չէր կազմվել, որը բացակայում էր ձերբակալվածի անձնական գործում:
3. Դ. Հարությունյանի անձնական գործում առկա էր տեղեկանք, հարազատին հեռախոսազանգի միջոցով նրա գտնվելու վայրի մասին տեղյակ պահելու մասին: Տեղեկանքում նշված է, որ X հեռախոսահամարով, տեղեկացվել է Դ. Հարությունյանի քրոջը՝ Վ. Հարությունյանին՝ նրան ՁՊՎ ընդունելու վերաբերյալ: Տեղեկանքը կազմել է ոստիկանության ավագ սերժանտ Գ. Հովհաննսիյանը: Դիտողական խմբի ուսումնասիրությունների արդյունքնում պարզվեց, որ Վ. Հարությունյանին ոչ մեկ չի զանգել և տեղեկանքը կրում է ձևական բնույթ:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՄՄ
Մուտք № 4742
24 11 14
ՀՀ Ոստիկանության Հասարակություն
Մուտք № 8990
24 11 2014թ.

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

4. Դ. Հարությունյանը փաստեց, որ բաժին բերման ենթարկվելուց հետո իրեն բաժնում ծեծի էր ենթարկել տվյալ բաժնի քրեական հետախուզության տեսուչներից մեկը, ում չէր ճանաչում, բայց առերեսման դեպքում կճանաչի:
5. 4-րդ խցում պահվող ձերբակալված Դավիթ Հարությունյանը 17.11.2014թ-ից գտնվելով ՁՊՎ-ում չէին տրամադրել ոչ մի տեսակի սպիտակեղեն, այն դեպքում, երբ ձերբակալվածը գտնվում էր հացադուլի մեջ և անկողնային վիճակում: ՁՊՎ-ի վարչակազմը չհերքեց նրան սպիտակեղեն չտրամադրելու փաստը, միայն տրվեց պարզաբանում, որ ինքնավնասումից խուսափելու նպատակով չի տրվել, որը Դիտորդական խմբի համար անընդունելի է: Խումբը կարծում է, որ.
   - Կարելի է լիարժեք հսկողություն իրականացնել նրա նկատմամբ
   - Եթե անձը որոշել էր ինքնավնասման փորձ կատարեր, ապա հնարավոր է որևէ այլ միջոց գտնել
6. Ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի և համապատասխան դիմումի՝ Դ. Հարությունյանը ունեցել էր տեսակցություն հարազատների հետ, բայց ձերբակալվածը նշեց, որ տեսակցությունը ծնողների հետ եղել է ՁՊՎ-ի վարչական տարածքի և ռեժիմային գոտու բաժանարար վանդակաճաղերի մոտ, մոտ՝ 2-3 րոպե տևողությամբ:
7. ՁՊՎ-ն չէր ջեռուցվում, խցերում շատ ցուրտ էր մոտ՝ 12⁰C -13⁰C:
8. ՁՊՎ-ն ընդհանուր գտնվում էր կեղտոտ վիճակում, աղբամանները գտնվում էին աղբով լի և կեղտոտ վիճակում:
9. Սանհանգույցի լվացարանը գտնվում էր հակահիգիենիկ և կեղտոտ վիճակում:

Կից ներկայացնում ենք փաստը հաստատող լուսանկարներ:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-3346 << 18 >> 12 2014թ.

Ձեր 21.11.2014թ. թիվ 2621/1490 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ՝

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ նոյեմբերի 19-ին ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված հանգամանքներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Արմավիրի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն:

ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության կողմից կատարված ծառայողական քննության արդյունքում տրամադրված տեղեկատվության համաձայն տրվում են հետևյալ մեկնաբանությունները:

1. 2014թ. նոյեմբերի 17-ին՝ ժամը 08:30-ին Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 13.11.2014թ. որոշման հիման վրա, խուզարկություն կատարելու նպատակով, ոստիկանության Արմավիրի բաժնի թվով 7 ծառայողներ, որոնցից 3-ը համազգեստով այցելել են Դ.Հարությունյանի տուն:

Տան դռան մոտ հանդիպել են երկու ճամպրուկներ ձեռքերին տանից դուրս եկող Դ.Հարությունյանին, ով նկատելով ոստիկանության համազգեստով առջևից իրեն մոտեցող ՀՈԲ տեսուչին, ճամպրուկները ձեռքերից բաց թողնելով ոտքով ու գլխով ուժգին հարվածել է նրա որովայնին ու գլխին: Այնուհետև խոհանոցից վերցրած դանակով հարվածել է ՔՀ բաժանմունքի օպերլիազորի ձեռքին՝ տալով սեռական բնույթի հայհոյանքներ: Ոստիկանության ծառայողները կիրառելով ձեռնամարտի հնարքներ՝ Դ.Հարությունյանին վնասազերծել և ժամը 08.50-ին բերման են ենթարկել ոստիկանության Արմավիրի բաժին: Նույն օրը, ժամը 11.25-ին, այսինքն բերման ենթարկվելուց 2 ժամ 35 րոպե անց, Դ.Հարությունյանը նախապատրաստված նյութերի հետ միասին համապատասխան գրությամբ ներկայացվել է ՀՀ ՔԿ Արմավիրի մարզի քննչական վարչություն, որի վերաբերյալ <<Ոստիկանության ստորաբաժանում բերված անձանց հաշվառման>> մատյանում կատարվել է գրառում:

Դեպքի առթիվ 17.11.2014թ. քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ, ժամը 18.55-ին Դ.Հարությունյանը ձերբակալվել է և ժամը 19.20-ին տեղափոխվել է ՁՊՎ:

Դ.Հարությունյանին բերման ենթարկելուց մոտ 10 ժամ անց ձերբակալելու փաստով տեղեկություններ ստանալու համար առաջարկվում է դիմել ՀՀ քննչական կոմիտե:

2. Դ.Հարությունյանին ոստիկանության Արմավիրի բաժին բերման ենթարկելուց հետո ՔՀԲ աշխատակցի կողմից անմիջապես կազմվել է անձին բերման ենթարկելու մասին արձանագրություն, որը գրանցվել է <<Ոստիկանության ստորաբաժանում բերված անձանց հաշվառման>> մատյանում: Այնուհետև արձանագրությունը կցվել է նախապատրաստվող նյութերին, որն արդեն իսկ ուղարկված է եղել ՔԿ Արմավիրի քննչական վարչություն, ինչի պատճառով էլ դիտորդների խմբի այցելության ժամանակ այն բացակայել է:

3. 17.11.2014թ. ժամը 19.20-ին Դ.Հարությունյանին ՁՊՎ ընդունելուց հետո, բաժնի հերթապահ մասի պետը զանգահարել է վերջինիս կողմից ընտրած անձին՝ քրոջը և տեղեկացրել եղբոր ձերբակալման մասին: Քույրը՝ Վ.Հարությունյանը հայտնել է, որ եղբոր վերաբերյալ ոչինչ լսել չի ցանկանում և ձերբակալման մասին կտեղեկացնի ծնողներին: Հեռախոսազրույցի վերաբերյալ կազմվել է տեղեկանք և դրվել վերջինիս անձնական գործում: Բացի այդ, կատարված ծառայողական քննության ընթացքում ստուգվել է նշված հանգամանքը և պարզվել է, որ իրոք, Վ.Հարությունյանը եղբոր ձերբակալման մասին տեղեկացել է հեռախոսազանգի միջոցով՝ ոստիկանության Արմավիրի բաժնից:

4. Ծառայողական քննության ընթացքում պարզվել է, որ Դ.Հարությունյանին ոստիկանության բաժին բերման ենթարկելուց հետո նրա նկատմամբ ոստիկանության ծառայողների կողմից բռնություն չի գործադրվել, նրան ոչ ոք ծեծի չի ենթարկել: 17.11.2014թ. ժամը 19.30-ին Դ.Հարությունյանը դուրս է բերվել ՁՊՎ-ի խցից դեպի բուժկետ, հրավիրված շտապօգնության անձնակազմի կողմից ենթարկվել է բուժզննության, որի ընթացքում նրա մարմնի վրա հայտնաբերվել են <<աջ այտի շրջանի փափուկ հյուսվածքների սալջարդ և աջ ոտքի սրունքի կողային քերծվածք>>: <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում հրավիրված բժշկի կողմից կատարված գրառման համաձայն, Դ.Հարությունյանը բուժզննության ընթացքում բանավոր հայտարարել է, որ մարմնական վնասվածքը ստացել է ձերբակալման ընթացքում ոստիկաններին ցույց տրված դիմադրության ժամանակ:

Դ.Հարությունյանի մարմնական վնասվածքների վերաբերյալ իրազեկվել են նախաքննություն իրականացնող մարմինը և Արմավիրի մարզի դատախազը: Հարուցված քրեական գործի շրջանակներում քննության կառնվեն Դ.Հարությունյանի կողմից նշված հանգամանքները և կտրվեն իրավական գնահատականներ:

5. Ծառայողական քննության ընթացքում ոստիկանության Արմավիրի բաժնի հերթապահ մասի պետը պարզաբանել է, որ Դ.Հարությունյանը ձերբակալվելուց հետո ձերբակալման որոշման հետ համաձայն չլինելու առումով գտնվել է նյարդային լարված վիճակում, դրսևորել է անհավասարակշիռ վարքագիծ և ՁՊՎ ընդունվելուց սպիտակեղեն տրամադրելու ժամանակ հայտարարել է, որ <<սպիտակեղենի սավանից կախվելու համար լավ պարան կստացվի>>: Հաշվի առնելով վերջինիս անհավասարակշիռ վարքագիծը և անկանխատեսելի հետևանքներից խուսափելու նպատակով Դ.Հարությունյանին սպիտակեղեն չի տրամադրվել: Բացի այդ, նրա նկատմամբ ցուցաբերված առավելագույն ուշադրության և հսկողության արդյունքում հաջողվել է կանխել ս/թ նոյեմբերի 20-ին ՁՊՎ-ի 4-րդ խցում Դ.Հարությունյանի կողմից ներքնազգեստով կատարված ինքնասպանության փորձը: Ոստիկանության Արմավիրի բաժնի հերթապահ մասի պետը ձերբակալված Դ.Հարությունյանին սպիտակեղեն չտրամադրելու համար խիստ նախազգուշացվել է:

6. Ձերբակալված Դ.Հարությունյանի մոր, Մ.Հարությունյանի կողմից ներկայացված տեսակցության դիմումի համաձայն՝ Դ.Հարությունյանին ՁՊՎ-ի ծառայողների հսկողությամբ, տեսակցության սենյակում 18.11.2014թ. ժամը 15.15-ին տրամադրվել է տեսակցություն, վերջինիս ծնողների հետ: Ձերբակալվածի ծնողները 20 րոպե անց հեռացել են տեսակցության սենյակից՝ պատճառաբանելով, որ այլևս չեն ուզում տեսնել իրենց որդուն: Տեսակցությունը գրանցվել է <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում:

7. Ներկայումս իրականացվում են աշխատանքներ ՁՊՎ-ում լոկալ ջեռուցման համակարգի անցկացման ուղղությամբ և այդ ընթացքում տեխնիկական պայմաններից ելնելով ՁՊՎ-ի խցերը ջեռուցվում են խցերի դռների օդանցքների վրա ամրացված էլեկտրական փչովի տաքացուցիչներով, որոնք ապահովում են սահմանված ջերմաստիճանը: Դիտորդների խմբի այցելության ժամանակ տաքացուցիչները եղել են անջատված՝ ՁՊՎ-ում պահվող անձանց խնդրանքով:

8-9. Դիտորդների խմբի հաշվետվության 8-րդ և 9-րդ կետերում նշված թերությունները դիտորդների խմբի հեռանալուց հետո անմիջապես վերացվել են:

ՀՀ ոստիկանության շտաբ